ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Փառք Աստծուն Կողոսիայում գտնվող հերետիկոսների համար. նրանց պատճառով է, որ Պողոսը գրեց այս հզոր նամակը: Հիշե՛ք, որ գիրքը հասկանալու համար մենք պետք է անդրադառնանք պատմական միջավայրին: Պողոսի նամակները կոչվում են «հազվագյուտ փաստաթղթեր», քանի որ նա անդրադառնում էր եկեղեցում առկա տեղական խնդիրներին տիեզերական ավետարանի ճշմարտությունների միջոցով: Կողոսիայում առկա հերձվածողությունը հունական փիլիսոփայության (Գնոստիցիզմի) և Հուդայականության մի անսովոր խառնուրդ էր:

Բ. Կենտրոնական թեման է (տես՝ Կող. 1:15-17) Հիսուսի տիեզերական Տիրակալությունը (կամ մի ուրիշ խոսքով՝ Հիսուսը որպես ամբողջ ստեղծագործության Արարիչ, Փրկիչ ու Տեր, և դրա կիրառությունները Քրիստոնեական կյանքի համար): Այս գրքի Քրիստոլոգիան անգերազանցելի է: Կողոսացիներին ուղղված թուղթը ձևավորում է Եփեսացիներին ուղղված թղթի հիմական ուրվագիծը: Պողոսը գիտեր, որ հերձվածողությունը տարածվելու էր Փոքր Ասիայի տարածքում: Կողոսացիների թուղթը հարձակվում է կեղծ ուսմունքների վրա, մինչ Եփեսացիներինը՝ զարգացնում է իր կենտրոնական թեմաները՝ ուրիշ եկեղեցիներին պատրաստելով գալիք գերձվածողությանը դիմակայելու: Կողոսացիների թղթի հիմնական շեշտադրումը Քրիստոլոգիական է, մինչ Եփեսացիներինը շեշտադրում է, որ ամեն ինչ միավորված է Քրիստոսում, ով Տերն է ամեն բանի:

Գ. Պողոսը շատ հզոր տերմիններով հերքում է օրինապաշտությունը՝ թե՛ հրեական և թե՛ հունական (Կող. 2:6-23): Այս թուղթն ընդունելով որպես օրինակ, ինչ-որ մեկը հնարավոր է զարմանա, թե ինչպես կարող է Պողոսը անդրադառնալ մերօրյա հերձվածողություններին: Անշուշտ նա նրանց էլ կընդգրկեր այստեղ:

ՔԱՂԱՔԸ

Ա. Սկզբնապես Կողոսի քաղաքը Փռուգիայի ներսում Պերգամոնի թագավորության մի մասն էր կազմում: Ք.Ա. 133թ-ին այն տրվում է Հռոմի սենատին:

Բ. Կողոսիան նախքան Պողոսի օրերը եղել է մեծ առևտրական կենտրոն (տես՝ Հերոդոտոսի *Պատմություններ* VII:30 և Քսենոֆոնի *Անաբասիս* 1:2:6):

1. Ձորը, որում գտնվում էր Կողոսիան, համարվում էր հնագույն Միջերկրական աշխարհի բրդի՝ հատկապես սև և ներկված բրդի, մանուշակագույնի և կարմիրի առաջատար արտադրողը: Հրաբխային հողը արոտավայրերի գերազանց պայմաններ էր ստեղծել, իսկ կավահող ջուրը օգնում էր գունավորման գործընթացին (Ստրաբո, 13:4:14):
2. Գործող հրաբուխները (Ստրաբո, 12:8:6) քաղաքի պատմության ընթացքում մի քանի անգամ դարձան վերջինիս կործանման պատճառ. ամենավերջին անգամ տեղի ունեցավ մ.թ.60թ-ին (Տակտիկուս) կամ մ.թ.64թ-ին (Եվսեբիոս):

Գ. Կողոսիան գտնվում էր Լիկուս գետի վրա՝ Մայանդեր գետի վտակին, որը անցնում էր Եփեսոսի կողքով, 100 մղոն հոսանքով դեպի ցած: Այս հովտում մի քանի փոքր քաղաքներ կային, որտեղ Եպափրասը սկսել էր եկեղեցիներ՝ Երապոլիսը (6 մղոն հեռու) և Լավոդիկեն (10 մղոն հեռու, տես՝ Կող. 1:2; 2:1; 4:13, 15-16) և Կողոսիան:

Դ. Հռոմեացիների կողմից արևելքը արևմուտքի հետ կապող իրենց գլխավոր մայրուղին՝ *Վիա Իգնատիան* (*Via Ignatia*) կառուցելուց հետո, որը անցնում է Կողոսիայի կողքով, այն փոքրացավ դառնալով գրեթե ոչինչ (Ստրաբո): Սա նման է Պաղոստինի տրանս Հորդանանյան Պետրայում տեղի ունեցածին:

Ե. Քաղաքը հիմնականում բաղկացած էր հեթանոսներից (բնակիչները փռյուգիացիներ և հույներ էին), սակայն կային նաև բազմաթիվ հրեաներ: Ջոզեֆուսը մեզ ասում է, որ Անտիոքոս III (Ք.Ա.223-187թթ) Բաբելոնից 2000 հրեաների տեղափոխեց Կողոսիա: Արձանագրությունները ցույց են տալիս, որ մ.թ.76թ-ին 11,000 հրեաներ էին ապրում մի շրջանում, որի մայրաքաղաքն էր Կողոսիան:

ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Նամակն ունի երկու ուղարկող՝ Պողոսն ու Տիմոթեոսը (տես՝ Կող.1:1): Սակայն հիմնական հեղինակը Պողոսն է. Տիմոթեոսն ուղարկում էր իր ողջույնները որպես Պողոսի գործակիցը և հավանաբար նրա դպիրը (*amanuensus*):

Բ. Հնագույն գրական աղբյուրները միաձայն համամիտ են, որ հեղինակը Պողոս Առաքյալն է.
1. Մարկիոնը՝ (որը ժամանեց Հռոմ մ.թ.140-ականներին), հակա-հինկտակարանյան հերետիկոսը, այս նամակը ընդգրկել է իր պողոսյան ժողովածուի մեջ:
2. Այն թվարկված է Մուրատորիան Կանոնի (մոտ մ.թ.180-200թթ. Հռոմից կանոնական գրքերի մի ցանկ է) Պողոսի նամակների ցանկում:
3. Վաղ եկեղեցու մի քանի հայրեր մեջբերում են կատարում այս նամակից և որպես հեղինակ համարում են Պողոսին՝
   ա. Իրենեոսը (գրել է մ.թ.177-190թթ)
   բ. Ալեքսանդրիացի Կլեմենտուսը (ապրել է մ.թ.160-216թթ)

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԸ

Ա. Բանտից գրված այս երկու նամակների միջև պատմական կապը հետևում է այս ուրվագծին՝
1. Եպափրասը (Կող.1:7; 4:12; Փիլիմոն 1:23) դարձի էր եկել Պողոսի Եփեսոսյան քարոզարշավի ժամանակ (Գործք 19):
   ա. Եպափրասը տարավ իր նորահայտ հավատքը իր հարազատ բանակավայրը՝ Լիկուս գետի հովիտը (տես՝ Կող.4:12):
   բ. Եպափրասը երեք եկեղեցի էր սկսել՝ Հերապոլիսի, Լավոդիկեի (տես՝ Կող.4:13) և Կողոսիայի:
   գ. Եպափրասը Պողոսից խորհուրդ էր հարցրել, թե ինչպիսի վարք ցուցաբերի Քրիստոնեության, Հուդայականության և հունական մտածելակերպի միաձուլման հանդեպ, որը սովորեցնում էին հերձվածողները: Պողոսը բանտարկված էր (տես՝ Կող.4:3,18) Հռոմում (60-ականների սկզբին):
2. Սուտ վարդապետները պաշտպանում էին հունական մետաֆիզիկան՝
   ա. Հոգին և մատերիան համահավասար հավիտենական էին
   բ. Հոգին (Աստված) բարի էր
   գ. Մատերիան (ստեղծագործությունը) չար էր
   դ. Բարձր բարի Աստծո և ավելի փոքր աստծո միջև, որը ստեղծել էր մատերիան, գոյություն են ունեցել մի շարք *աէոններ* (հրեշտակային մակարդակներ), հատկապես Վալենտինյանների գրերում:

ե. Փրկությունը հիմնված էր գաղտնագրերի գիտության վրա, որոնք օգնում էին մարդկանց առաջխաղացում գրանցել այդ հրեշատակային մակարդակների (*աէոնների*) միջով դեպի բարձր բարի Աստվածը:

Բ. Պողոսի երկու նամակների միջև գրական կապը

1. Պողոսը լսել էր այս եկեղեցիներում հերձվածողության մասին, որոնց անձամբ երբեք չէր այցելել (տես՝ Կող. 1:7-8):
2. Պողոսը գրեց մի դժվարամարս նամակ հակիրճ, զգացական նախադասություններով, ուղղված սուտ վարդապետներին: Կենտրոնական թեման Հիսուսի տիեզերական տիրակալությունն է: Այս նամակը հայտնի է որպես Կողոսացիներին ուղղված Պողոսի թուղթ:
3. Ըստ երևույթին, հենց անմիջապես Կողոսացիների նամակը գրելուց հետո, բանտում ժամանակ ունենալով, նա զարգացրեց մեզ քաջ հայտնի Եփեսացիների նամակում առկա թեմաները: Նա գիտեր, որ հունական մտածելակերպն ու ավետարանը իրար միաձուլելու փորձերը, որի նպատակն էր Քրիստոնեությունը «հարմարացնել» հունական մշակույթին, կտարածվեր ամբողջ Փոքր Ասիայի տարածքում գտնվող նոր եկեղեցիներում: Եփեսացիներին ուղղված նամակին հատկանշական են երկար նախադասություններն ու ձևավորված աստվածաբանական հասկացությունները (Կող. 1:3-14,15-23; 2:1-10,14-18, 19-22; 3:1-12, 14:19; 4:11-16; 6:13-20): Այն գործածում է Կողոսացիների նամակը որպես ելակետ և դուրս բերում այնտեղ առկա աստվածաբանական կիրարկումները: Կենտրոնական թեման Քրիստոսում բոլոր բաների միաբանությունն է, որը սկզբնական Գնոստիցիզմի *աէոնների* (հրեշտակային մակարդակների) հակադրությունն է:

Գ. Գրական և աստվածաբանական կառուցվածքը

1. Հիմնական կառուցվածքը
   ա. Երկուսն էլ ունեն իրար շատ նման բացման խոսք
   բ. Երկուսն էլ ունեն վարդապետական բաժին, որը հիմնականում վերաբերում է Քրիստոսին:
   գ. Երկուսն էլ ունեն գործնական՝ կիրառելի բաժին, որը շեշտադրում է Քրիստոնեական ապրելակերպը, կիրառելով միևնույն կատեգորիաները, տերմինները և արտահայտությունները:
   դ. Դրանք ունեն գրեթե նույն փակման խոսքերը: Հունարենում դրանք ունեն միևնույն 29 հաջորդական խոսքեր. Կողոսացիների թուղթը ավելացնում է միայն երկու հավելյալ խոսք («և ծառայակիցը»): Համեմատե՛ք Եփես. 6:21-22-ը Կող. 4:7-9-ի հետ:
2. Ճիշտ միևնույն խոսքեր կամ կարճ արտահայտություններ

Եփես. 1:1գ և Կող. 1:2ա	«հավատարիմ»
Եփես. 1:4 և Կող. 1:22	«սուրբ և անարատ»
Եփես. 1:7 և Կող. 1:14	«փրկություն. . . մեղքերի թողություն»
Եփես. 1:10 և Կող. 1:20	«ամեն բան. . . երկինք. . . երկիր»
Եփես. 1:15 և Կող. 1:3-4	«լսեցինք. . . բոլոր սուրբերի հանդեպ սիրո մասին»
Եփես.1:18 և Կող. 1:27	«փառքի ճոխությունը»
Եփես. 1:27 և Կող. 1:18	«լսեցինք. . . եկեղեցի»
Եփես. 2:1 և Կող. 1:13	«դուք մեռած էիք»
Եփես. 2:16 և Կող. 1:20	«հաշտեցնի . . . խաչ»
Եփես. 3:2 և Կող. 1:25	«տնտեսություն»
Եփես. 3:3 և Կող. 1:26,27	«խորհուրդը»
Եփես. 4:3 և Կող. 3:14	«կապ»
Եփես. 4:15 և Կող. 2:19	«գլուխ» և «աճել»
Եփես. 4:24 և Կող. 3:10,12,14	«հագեք. . .»
Եփես. 4:31 և Կող. 3:8	«բարկություն», «զայրույթ», «չարություն», «հայհոյանք»
Եփես. 5:3 և Կող. 3:5	«պոռնկություն», «պղծություն», «ագահություն»

Եփես. 5:5 և Կող. 3:5	«կռապաշտություն» (կիրք)
Եփես. 5:6 և Կող. 3:6	«Աստծո բարկությունը»
Եփես. 5:16 և Կող. 4:5	«ճիշտ օգտագործեք ժամանակը»

3. Ճիշտ նույն արտահայտություններ կամ նախադասություններ
   Եփես. 1:1ա և Կող. 1:1ա
   Եփես. 1:1բ և Կող. 1:2ա
   Եփես. 1:2ա և Կող. 1:2բ
   Եփես. 1:13 և Կող. 1:5
   Եփես. 2:1 և Կող. 2:13
   Եփես. 2:5բ և Կող. 2:13գ
   Եփես. 4:1բ և Կող. 1:10ա
   Եփ. 6:21,22 և Կող. 4:7-9 (29 հաջորդիվ բառեր, բացի Կողոսացիներում «kai syndoulous»-ից)

4. Նմանատիպ արտահայտություններ կամ նախադասություններ
   Եփես. 1:21 և Կող. 1:16
   Եփես. 2:1 և Կող. 1:13
   Եփես. 2:16 և Կող. 1:20
   Եփես. 3:7ա և Կող. 1:23դ, 25ա
   Եփես. 3:8 և Կող. 1:27
   Եփես. 4:2 և Կող. 3:12
   Եփես. 4:29 և Կող. 3:8; 4:6
   Եփես. 5:15 և Կող. 4:5
   Եփես. 5:19,20 և Կող. 3:16

5. Աստվածաբանորեն համարժեք գաղափարներ
   Եփես. 1:3 և Կող. 1:3
   Եփես. 2:1,12 և Կող. 1:21
   Եփես. 2:15 և Կող. 2:14

Եփես. 4:1 և Կող. 1:10	գոհության աղոթք
Եփես. 4:15 և Կող. 2:19	օտարություն Աստծուց, Օրենքի թշնամությունը
Եփես. 4:19 և Կող. 3:5	արժանի վարք
Եփես. 4:22,31 և Կող. 3:8	Քրիստոսի մարմինն իր Գլխից է աճում հասունության մեջ
Եփես. 4:32 և Կող. 3:12-13	սեռական անմաքրություն, «մի կողմ նետված» մեղքեր
Եփես. 5:4 և Կող. 3:8	Քրիստոնյաները բարի են միմյանց հանդեպ
Եփես. 5:18 և Կող. 3:16	Հոգով լեցունություն=Քրիստոսի խոսք
Եփես. 5:20 և Կող. 3:17	Գոհություն Աստծուն ամեն բանի համար
Եփես. 5:22 և Կող. 3:18	կանա՛յք, հնազանդվե՛ք ձեր ամուսիններին,
Եփես. 5:25 և Կող. 3:19	ամուսիննե՛ր, սիրեցե՛ք ձեր կանանց,
Եփես. 6:1 և Կող. 3:20	որդիներ, հնազանդ եղե՛ք ձեր ծնողներին
Եփես. 6:4 և Կող. 3:21	հայրե՛ր, ձեր զավակներին մի՛ բարկացրեք
Եփես. 6:5 և Կող. 3:22	ծառանե՛ր, ձեր տերերին հնազա՛նդ եղեք
Եփես. 6:9 և Կող. 3:22	տերեր և ծառաներ
Եփես. 6:18 և Կող. 4:2-4	Պողոսի աղոթքի խնդրանքը

6. Կողոսացիներում և Եփեսացիներում կիրառված տերմիններ և արտահայտություններ, որոնք չեն օգտագործվել Պողոսի մյուս գրերում

ա. «լիություն» (որը գնոստիկ տերմին էր և կիրառվում էր հրեշտակային մակարդակների համար)

Եփես. 1:23	«այն լրումը, որ ամեն ինչ լցնում է ամեն ինչում»
Եփես. 3:19	«Աստծո ամբողջական լիությամբ լցվեք»
Եփես. 4:13	«Քրիստոսի լիությանը»
Կող. 1:19	«Նրա ամբողջ լիությունը Նրա մեջ բնակվի»
Կող. 2:9	«նրա մեջ է բնակվում Աստծո ամբողջ լիությունը»

բ. Քրիստոսը որպես եկեղեցու «Գլուխ»
Եփես. 4:15; 5:23 և Կող. 1:18; 2:19

գ. «օտարացած»
Եփես. 2:12; 4:18 և Կող. 1:21

դ. «ժամանակը ծախու առնելով»
Եփես. 5:16 և Կող. 4:5

ե. «արմատացած»
Եփես. 3:17 և Կող. 1:5

զ. «ճշմարտության խոսքը, ավետարանը»
Եփես. 1:13 և Կող. 1:5

է. «հանդուրժելով»
Եփես. 4:2 և Կող. 3:13

ը. անսովոր արտահայտություններ և տերմիններ («միացած», «ապահովել»)

Դ. Ամփոփում

1. Կողոսացիներում առկա բառերի մեկ երրորդից ավելին կան նաև Եփեսացիներում: Գնահատվել է, որ Եփեսացիներում առկա 155 համարներից 75-ն ունեն Կողոսացիներում իրենց համազոր համարները: Երկուսն էլ հաստատում են Պողոսի հեղինակ լինելու փաստը, մինչ գտնվում էր բանտում:
2. Երկուսն էլ առաքել է Պողոսի ընկեր Տյուքիկոսը:
3. Երկուսն էլ ուղարկվել են միևնույն տարածաշրջանը (Փոքր Ասիա)
4. Երկուսն էլ գործ ունեն միևնույն Քրիստոլոգիական թեմայի հետ:
5. Երկուսն էլ շեշտադրում են Քրիստոսին որպես եկեղեցու Գլուխ:
6. Երկուսն էլ քաջալերում են Քրիստոնեական ապրելակերպը:

Ե. Հիմնական տարբերությունները՝

1. Կողոսացիներում եկեղեցին միշտ տեղական բնույթի է, իսկ Եփեսացիներում՝ տիեզերական: Հնարավոր է պատճառը լինի Եփեսացիների շրջանառվող նամակ լինելու փաստը:
2. Հերձվածողությունը, որը բավականին աչքի ընկնող առանձնահատկություն է Կողոսացիներում, լիովին բացակայում է Եփեսացիներում: Սակայն, երկու նամակներն էլ կիրառում են հատկանշական գնոստիկ տերմիններ («իմաստություն», «գիտություն», «լիություն», «խորհուրդ», «իշխանություններ և զորություններ» և «տնտեսություն»):
3. Կողոսացիների թղթում Երկրորդ Գալուստը անմիջապես է, իսկ Եփեսացիներում՝ հետաձգված: Եկեղեցին կանչված էր և կանչված է ծառայելու մեղավոր աշխարհին (Կող. 2:7, 3:21, 4:13):
4. Պողոսի կողմից կիրառելի մի քանի տերմիններ այլ կերպ են գործածվում: Օրինակներից մեկը «խորհուրդ» տերմինն է: Կողոսացիներում Քրիստոսի խորհուրդը (Կող. 1:26-27, 2:2, 4:3), սակայն Եփեսացիներում (Եփես. 1:9, 5:32) հանդիսանում է Աստծո կողմից նախապես ծածկված, բայց այժմ հայտնված ծրագիրն է հեթանոսների և հրեաների միաբանության ծրագրի համար:

5. Եփեսացիների թուղթն ունի մի քանի Հին Կտակարանյան օրինակներ (Եփես. 1:22 - Սաղմ. 8; Եփես. 2:17 – Ես. 57:19) (Եփես. 2:20 – Սաղմ. 118:22) (Եփես. 4:8 - Սաղմ. 68:18) (Եփես. 4:26 – Սաղմ. 4:4) (Եփես. 5:15 – Ես. 26:19, 51:17, 52:1, 60:1) (Եփես. 5:31 – Ծնն. 2:24) (Եփես. 5:31 – Ծնն. 2:24) (Եփես. 6:2-3 – Ելից 20:12) (Եփես. 6:14 – Ես. 11:5, 59:17) (Եփես. 6:15 – Ես. 52:7), սակայն Կողոսացիներում առկա են միայն մեկը կամ երկուսը՝ Կող. 2:3 – Ես. 11:2, և հավանաբար Կող. 2:22 – Ես. 29:13:

Զ. Չնայած որ շատ նման են խոսքերով, արտահայտություններով և հաճախ իրենց համատեքստով, նամակները նաև բովանդակում են յուրահատուկ գաղափարներ՝
1. Շնորհքի երրորդության օրհնությունը, Եփես. 1:3-14
2. Շնորհքի հատվածը, Եփես. 2:1-10
3. Հրեաների և հեթանոսների միաձուլումը մի նոր մարմնի մեջ, Եփես. 2:11-3:13
4. Քրիստոսի մարմնի միությունն ու պարգևները, Եփես. 4:1-16
5. «Քրիստոսը և եկեղեցին» որպես «այր և կնոջ» օրինակ, Եփես. 5:22-33
6. Հոգևոր պատերազմի հատվածը, Եփես. 6:10-18
7. Քրիստոլոգիական հատվածը, Կող. 1:13-18
8. Մարդկային կրոնական ծեսերն ու ծիսակարգերը, Կող. 2:16-23
9. Կողոսացիներում Քրիստոսի մեջ տիեզերական կարևորության թեման ի հակադրություն Եփեսացիներում Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանության թեմայի:

Է. Ամփոփելով, կարծում եմ լավ կլինի հետևել Ա.Թ.Ռոբերթսոնին և Ֆ.Ֆ.Բրյուսին, որոնք հաստատում են, որ այս երկու թղթերն էլ Պողոսն է գրել իրարից շատ մոտ ժամանակահատվածում և Կողոսացիների թղթում առկա մտքերը զարգացնելով ներկայացրել ճշմարտությունը իր գլխաքար հանդիսացող Եփեսացիներին ուղղված թղթում:

ԳՐԱՌՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Կողոսացիներին ուղղված նամակի գրառման տարեթիվը կապված է Պողոսի բանտարկությունների հետ (Եփեսոս, Փիլիպպե, Կեսարիա կամ Հռոմ): Հռոմեական բանտարկությունը ամենաշատն է համընկնում Գործ Առաքելոցում առկա փաստերի հետ:

Բ. Եթե համարենք, որ Հռոմն է եղել նրա բանտարկության վայրը, ապա հարց է առաջանում՝ ե՞րբ: Գործ Առաքելոցը արձանագրում է, որ Պողոսը բանտարկվել է 60-ականների սկզբին: Սակայն, նա ազատվել է և գրել Հովվական Թղթերը (1 և 2 Տիմոթեոսը և Տիտոսը) և ապա նորից բանտարկվում է մ.թ.68թ-ին, հունիսի 9-ից առաջ (Ներոն կայսրի ինքնասպանության տարեթիվը), հավանաբար մ.թ.67թ-ին:

Գ. Լավագույն գիտնականները ենթադրում են, որ Կողոսացիներին ուղղված նամակը (Եփեսացիներին և Փիլիմոնը) գրվել է Պողոսի առաջին բանտարկության ժամանակ՝ 60-ականների սկզբին: (Փիլիպպեցիներին ուղղված նամակը բանտի նամակներից ամենավերջինն է, հավանաբար գրված 60-ականների կեսերին):

Դ. Հավանաբար Տիվքիկոսն է Ոնեսիմոսի հետ միասին Փոքր Ասիա հասցրել Կողոսացիներին, Եփեսացիներին և Փիլիմոնին ուղղված նամակները: Ավելի ուշ, հավանաբար մի քանի տարի անց, Եպափրոդիտոսը, ապաքինվելով իր ֆիզիկական հիվանդությունից, իր տնային եկեղեցուն է հասցրել Փիլիպպեցիներին ուղղված նամակը:

Ե. Պողոսի թղթերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ.Բրյուսի և Մյուրի Հարրիսի՝ աննշան հարմարեցումներով:

	Գիրքը	Տարեթիվը	Գրվելու վայրը	Կապը Գործքի հետ
1	Գաղատացիներ	48	Սիրիայի Անտիոք	Գործք 14:28; 15:2
2	1 Թեսաղոնիկեցիներ	50	Կորնթոս	Գործք 18:5
3	2 Թեսաղոնիկեցիներ	50	Կորնթոս	
4	1 Կորնթացիներ	55	Եփեսոս	Գործք 19:20
5	2 Կորնթացիներ	56	Մակեդոնիա	Գործք 20:2
6	Հռոմեացիներ	57	Կորնթոս	Գործք 20:3
7-10	Բանտի նամակներ			
	Կողոսացիներ	60-ի սկիզբ	Հռոմ	
	Փիլիմոն	60-ի սկիզբ	Հռոմ	
	Եփեսացիներ	60-ի սկիզբ	Հռոմ	
	Փիլիպպեցիներ	ուշ 62-63	Հռոմ	Գործք 28:30-31
11-13	Չորրորդ միս. ճամփորդ.		Եփեսոս (?)	
	1 Տիմոթեոս	63 (կամ ուշ,	Մակեդոնիա	
	Տիտոս	63, նախքան		
	2 Տիմոթեոս	64 մ.թ.68)	Հռոմ	

ՍՏԱՑՈՂՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ըստ երևույթին եկեղեցին հիմնել էր Եպափրասը (տես՝ Կող. 1:7,8; 2:1; 4:12-13), որը հավանաբար դարձի էր եկել Եփեսոսում՝ Պողոսի միջոցով (տես՝ Կող. 1:7-8 և համեմատե՛ք Կող. 2:1-ի հետ): Այն հիմնականում կազմված էր հեթանոսներից (տես՝ Կող. 1:21; 3:7): Եպափրասը եկել էր Պողոսի մոտ բանտ, որպեսզի հաղորդի նրան կեղծ վարդապետների հետ կապված խնդրի մասին, որոնք սովորեցնում էին Գնոստիցիզմ՝ Քրիստոնեության և հունական փիլիսոփայության խառնուրդ (Կող. 2:8) և հրեական օրինապաշտություն (տես՝ հրեական տարրերը՝ Կող. 2:11, 16, 17; 3:11. հրեշտակների պաշտամունք, Կող. 1:16; 2:15, 18 և ասկետիզմ՝ Կող. 2:20-23): Կողոսիայում կար բավականին մեծ հրեական համայնք, որը շատ հելլենական էր դարձել: Խնդրի ամբողջ էությունը կայանում էր Քրիստոսի անձի և գործի մեջ: Գնոստիկները հերքում էին, որ Հիսուսը լիակատար մարդ էր, սակայն հաստատում էին, որ Նա կատարյալ աստվածային էր, քանի որ ընդունում էին մատերիայի և հոգու միջև առկա հավիտենական անտագոնիստիկ երկակիությունը՝ դուալիզմը: Նրանք հաստատում էին Հիսուսի աստվածությունը, սակայն հերքում՝ Նրա մարդեղությունը: Ինչպես նաև հերքում էին Նրա միջնորդական գերակայությունը: Նրանց համար գոյություն ունեին մեծաթիվ հրեշտակային մակարդակներ (*aeons*) բարի բարձրյալ աստծո և մարդկության միջև. Հիսուսը, չնայած որ ամենաբարձրն էր, հանդիսանում էր աստվածներից միայն մեկը: Նրանք նաև հակված էին լինելու մտավորականության էլիտան (տես՝ Կող. 3:11, 14, 16,17) և շեշտադրում էին յուրահատուկ բացառիկ գաղտնի գիտություն (տես՝ Կող. 2:15, 18, 19), որ իբրև դա է հանդիսանում Աստծո մոտ տանող ուղին, Հիսուսի քավչարար, փոխանորդական զոհի և Նրա ներման ձրի առաջարկին մարդկանց ապաշխարության հավատքով արձագանքելու փոխարեն:

Բ. Աստվածաբանական, փիլիսոփայական այս մթնոլորտի պատճառով Կողոսացիների գիրքը շեշտադրում է՝

1. Քրիստոսի անձի բացառիկությունը և փրկության Իր ավարտած գործը
2. Հիսուս Նազովրեցու տիեզերական տիրակալությունը, իշխանությունը և կարևորությունը՝ Նրա ծնունդը, ուսմունքները, Նրա կյանքը, հարությունը և համբարձումը: Նա՛ է ամեն ինչի Տերը:

ՆՊԱՏԱԿԸ

Պողոսի նպատակն էր հերքել Կողոսացիների հերձվածողությունը: Այս նպատակն իրականացնելու համար նա մեծարում է Քրիստոսին, որպես՝

1. ճիշտ Արարիչ (Կող. 1:16) Աստծո պատկերը (Կող. 1:15)
2. նախքան բոլոր բաների գոյության պահապանը (Կող. 1:17)
3. եկեղեցու գլուխը (Կող. 1:18)
4. առաջինը հարություն առնողների մեջ (Կող. 1:18)
5. մարմնացած աստվածության լիությունը (Կող. 1:19, 2:9)
6. հաշտարար Աստծո և մարդկանց միջև (Կող. 1:20-22)

Այսպիսով, Քրիստոսը լիարժեք կերպով բավարար էր: Պողոսն այս կարճ գրքում 25 անգամ կիրառում է «Քրիստոս» տիտղոսը: Հավատացյալներին «տրված է Քրիստոսում լեցունությունը» (Կող. 2:10): Կողոսացիների հերձվածողությունը աստվածաբանորեն բացարձակ անկարող էր ապահովել հոգևոր փրկություն: Այն մակերեսային և ստահոտ փիլիսոփայություն էր (Կող. 2:8), և անզոր զսպելու մարդու հին մեղավոր էությունը (Կող. 2:23):

Կողոսացիներում շրջանառվող թեման Քրիստոսը լիարժեք՝ կատարյալ բավարար լինելն է ի հակադրություն սոսկ մարդկային փիլիսոփայության ունայնության: Այս բավարարությունը արտահայտվում է Հիսուսի տիեզերական տիրակալությանը մեջ: Նա է ամեն տեսանելի և անտեսանելի բաների սեփականատերը, արարիչը և ինքնիշխանը (տես՝ Կող. 1:15-18):

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Ա. Պողոսի ավանդական բացման խոսքը՝

1. Ուղարկողի ինքնությունը, Կող. 1:1
2. Ստացողների ինքնությունը, Կող. 1:2ա
3. Ողջույնի խոսք, Կող. 1:2բ

Բ. Քրիստոսի գերազանցությունը (1-10 կետերը վերցված են NKJV պարբերական ուրվագծից)

1. Քրիստոսի վրա ունեցած հավատքը, Կող. 1:3-8
2. Քրիստոսի գերակայությունը, Կող. 1:9-18
3. Քրիստոսում հաշտությունը, Կող. 1:9-23
4. Քրիստոսի համար զոհաբերության ծառայությունը, Կող. 1:24-29
5. Ոչ թե փիլիսոփայություն, այլ Քրիստոս, Կող. 2:1-10
6. Ոչ թե օրինականություն, այլ Քրիստոս, Կող. 2:11-23
7. Ոչ թե մարմնեղենություն, այլ Քրիստոս, Կող. 3:1-11
8. Հագե՛ք Քրիստոսը, Կող. 3:12-17
9. Թույլ տվե՛ք, որ Քրիստոսը ներգործի ձեր տներում, Կող. 3:19-4:1
10. Թույլ տվե՛ք, որ Քրիստոսը ներգործի ձեր ամենօրյա կյանքում, Կող. 4:2-6

Գ. Պողոսի սուրհանդակները, Կող. 4:7-9

Դ. Պողոսի ընկերները ուղարկում են իրենց ողջույնները, Կող. 4:10-14

Ե. Պողոսն է ուղարկում ողջույններ, Կող. 4:15-17

Զ. Պողոսի փակման խոսքը իր իսկ ձեռքով, Կող. 4:18

ԳՆՈՍՏԻՑԻԶՄ

Ա. Այս հերձվածողության վերաբերյալ մեր ունեցած գիտելիքների մեծ մասը հասել է երկրորդ դարի գնոստիկ գրքերից: Այնուամենայնիվ արդեն իսկ առաջին դարում կային գնոստիցիզմի սկզբնական գաղափարները (Մեռյալ Ծովի Գալարները):

Բ. Կողոսիայի խնդիրը Քրիստոնեության, սկզբնական գնոստիցիզմի և օրինապահ Հուդայականության հիբրիդն էր՝ խառնուրդը:

Գ. Ոմանք նշում են երկրորդ դարի վալենտինյան և ցերինթյան գնոստիցիզմի վարձկանների մասին:
1. Մատերիան և հոգին համա-հավիտենական էին (գոյաբանական երկակիություն): Մատերիան չար է, հոգին՝ բարի: Աստված, որ հոգի է, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել ձուլվող չար մատերիայի հետ:
2. Աստծո և մատերիայի միջև գոյություն ունեն ճառագայթներ (*աէոններ* կամ հրեշտակային աստիճաններ՝ մակարդակներ): Վերջինը կամ ամենացածրը Հին Կտակարանի ՅԱՀՎԵՆ է, որը ձևավորեց՝ արարեց տիեզերքը (*kosmos*):
3. Հիսուսը ՅԱՀՎԵ-ի պես մի ճառագայթ էր, սակայն կշիռով ավելի բարձր, և ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան դասում են որպես ամենաբարձրը, սակայն Աստծուց որոշ չափով ցածր և հաստատ ոչ մարմնավորված աստվածություն (տես՝ Հովհ. 1:14): Քանի որ մատերիան չար է, Հիսուսը չէր կարող մարդկային մարմին հագնել և միաժամանակ լինել աստվածային: Նա պարզապես հայտնվեց որպես մարդ, սակայն իրականում հոգի էր (տես՝ 1 Հովհ. 1:1-3; 4:1-6):
4. Փրկությունը ձեռք էր բերվում Հիսուսի վրա ունեցած հավատքի միջոցով, դրան ավելացրած հատուկ գիտություն, որը հայտնի էր միայն խմբի որոշ մարդկանց: Գիտությունը (ծածկագրերը) անհրաժեշտ էր երկնային սֆերաների՝ ոլորտների միջով անցնելու համար: Աստծուն հասնելու համար հրեական լեգալիզմը՝ օրինականությունը, նույնպես պարտադիր էր:

Դ. Գնոստիկ սուտ վարդապետները սատարում էին երկու իրարամերժ էթիկական համակարգերի.
1. Ոմանց համար ապրելակերպը ընդհանրապես կապ չուներ փրկության հետ: Նրանց համար փրկությունը և հոգևորությունը պարփակված էին ծածուկ գիտության (ծածկագրերի) մեջ՝ հրեշտակային ոլորտների (*աէոնների*) միջոցով:
2. Ուրիշների համար ապրելակերպը փրկության համար կենսական կարևորություն ունի: Այս գրքում սուտ վարդապետները շեշտադրում են խստակյաց՝ ճգնավորի ապրելակերպը որպես ճշմարիտ հոգևորության ապացույց (տես՝ Կող. 2:16-23):

Ե. Մի քանի օգտակար գրականություն այս թեմայի շուրջ՝

Հենս Ջոնասի *Գնոստիկ կրոնը,* հրատարակված Բեքն Պրեսի կողմից (*The Gnostic Religion* by Hans Jonas, published by Beacon Press)

Բենթլի Լեյթնի *Գնոստիկ Սուրբգրային խոսքերը,* Անքոր Աստվածաշնչյան Մեջբերումներ Գրադարան (*The Gnostic Scriptures* by Bentley Layton, Anchor Bible Reference Library)

Նոր Կտակարանի Բառարան, IVP, «Գնոստիցիզմ», էջ՝ 414-417 (*The Dictionary of New Testament Background,* IVP, “Gnosticism” pp. 414-417).

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»-ից)

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի

ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք Աստվածաշնչյան տվյալ գիրքը ամբողջությամբ: Սահմանեք ամբողջ գրքի կենտրոնական թեման ձեր իսկ բառերով:

1. Ամբողջ գրքի թեման

2. Գրական տեսակը (ժանրը)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»-ից)

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Ուստի մեկ անգամ նստելով երկրորդ անգամ կարդացեք սուրբգրային ամբողջ գիրքը: Ընդգծեք հիմնական թեմաները (ընթերցանության երկրորդ շրջան) և արտահայտեք թեման մի նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. Եվ այլն